

մը կարող է կատարվել եթե ոչ բացառապես, գեթ գլխավորապես բնագրագիտական քննության ճանապարհով: Եթե Խորենացու «Հայոց պատմության» բնագիրը կար 5-րդ դարի ավարտին, ապա նրան հաջորդող հեղինակները, և ոչ միայն պատմիչները, չէին կարող անհաղորդ մնալ նրան, առավել ևս՝ չդիմել այդ գործին, քանի որ չէին կարող գտնել ավելի ընդգրկուն, առավել ամբողջական, ավելի քննական ու շարադրանքի մեջ խիստ հստակ մեկ այլ երկ:

Մեր հարցադրումը՝ Խորենացու երկի բնագրական հետքերի պրպտումով լուծում տալ տևականորեն վիճարկվող խնդիրներին, հայագիտությանը անձանոթ չէ: Նորայր Բյուզանդացին 1898—1899 թվականներին «Մշակում» հրատարակած «հայերեն հին գրականության խնդիրներ. Մովսես Խորենացի» հոդվածում փաստորեն այդ կարգի մասնական աշխատանք կատարել է և շատ չանցած՝ Խորենացու բնագրին առնչվող հեղինակների ու երկերի ժամանակագրական դասդասում առաջարկել՝ «Ընդդէմ կարիերեանց» խոսուն վերտառությամբ: Ցավոք, այդ ոչ ծավալուն հոդվածը տասնամյակներ անտիպ է մնացել և միայն վերջերս Մ. Մինասյանի հրապարակմամբ լույս աշխարհ եկել¹: Քաղաժո համադրությունների մի մասը Խորենացու մոտ և նրան հաջորդած հեղինակների երկերում պահպանված առանձին բառերի ու բառակապակցությունների ընդհանրությանն է վերաբերում, որ անշուշտ ուշագրավ է, բայց հաստատուն եզրակացության կրթվան չի կարող ծառայել, որովհետև երաշխիք չկա, թե հենց Խորենացուց է առնված²: Ստորև ներկայացվող քննության ժամանակ մենք զանց կառնենք նման իրողությունները՝ մեր դիտարկումները հիմնելով բնագրական հին ու նոր աներկբա քաղումների վրա, նշանակալիորեն ընդարձակելով ժամանակագրվող հեղինակների ու երկերի ցանկը:

1. Վստահաբար Խորենացու «Հայոց պատմությունը» ճանաչող և վերապատմությամբ նրանից քաղում կատարող առաջին մատենագիրը Հովհաննես Գաբրելենացի կաթողիկոսն է, որի գահակալության տարիները որոշակի են (557—574), մահվան թվականը՝ ստույգ³: Հայկական աղբյուրներից բացի, նրա կյանքի վերջին՝ կոստանդնուպոլսյան շրջանի մասին տեղեկություններ է հաղորդում ասորի Հովհան Եփեսացին⁴: «Գիրք թղթոցում» պահ-

¹ «Հանդէս ամսօրեայ», 1984, էջ 19—28:

² Մասամբ ադպիսին է նաև Խորենացու և Դավիթ Անհաղթի երկերում Գ. Սարգսյանի նկատած և քննության առած ընդհանուր տեղին (տես՝ «Кавказ и Византия», 1, Ереван, 1979, стр. 67—72): «Մասամբ» վերապահությունը պայմանավորված է հեղինակի արդարացի այն դիտարկմամբ, թե Խորենացու երկում «զսահմանս գիղից և ագարակաց» որոշելը Արտաշես թագավորի գործերի բնականոն շարադրանքում է հիշված իսկ Դավթի մոտ՝ արդեն պատրաստի օրինակը վկայակոչելու, «առաջնոյ» դիմելու առիթով (տես Դավթ Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք և Թուղթ Գիտայ կաթողիկոսի առ Դավթ, Վենետիկ, 1932, էջ 48): Խորենացու հետ ունեցած առնչությունը գնահատելուն խանգարում է և այն, որ ստուգապես չգիտենք Դավթի անունով հայտնի երկի բնագիր թե թարգմանությունն լինելը, ինչպես որ խնդրական է դիտվում նաև Անհաղթին պատկանելու իրողությունը (տես հ. Ներսես Ակինեան, Դավթ Հարքացի Անյաղթ փիլիսոփայ, Կեանքն եւ գործերը, Վիեննա, 1959, էջ 11—29):

³ Տես Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ազգապատում, Ա. հատ. մասն Բ, Պէրուք, 1959, էջ 557—566: Նաև՝ Հ. Պողոս Անանեան, Ետիքիոս Կ. Պոլսոյ պատրիարքին կորսում և անտիպ մէ գրութիւնը», «Armeniac», Venize, 1969, p. 320—322: Հ. Ներսես Ակինեան, Հ. Ն. Տէր-Պողոսեան, Մատենագրական հետազոտութիւններ, «Հանդէս ամսօրեայ», 1975, էջ 139—163:

⁴ Johannis Eresini Historia, 1c, p. 61=62. հատվածների թարգմանությունը տես Ն. Ակինյան, Ն. Տէր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 150—154:

պանվել են Գաբելենացու երեք գրվածքները՝ նվիրված եկեղեցու դավաճական, նվիրապետական և ծիսական խնդիրներին: Նրանցից մեկը Սյունիքի հոգևոր պետերին հասցեագրված թուղթն է, մյուսը՝ «Առ Աղուանից եպիսկոպոսունս» ուղերձը, երկուսն էլ կարևոր իրենց արժարժած խնդիրներով⁵: Վերջին պարագան հաստատվում է նաև այն փաստով, որ Մովսես Կաղանկատվացու երկում բերված է այդ երկրորդ թուղթն ամբողջությամբ⁶: Երրորդ գործը, որ «Գիրք թղթոցում» անմիջապես հաջորդում է «Առ Աղուանից եպիսկոպոսունս» ուղերձին, կրում է «Յովհաննու Հայոց կաթողիկոսի՝ ի յայտնութիւն Քրիստոսի», խորագիրը⁷: Քննարկման նյութը Ծննդյան և Հայտնության տոների առանձին-առանձին թե միաժամանակ կատարման հարցն է: «Եւ զոր յայլ քաղաքս ըստ Արտեմոնադիր ընթերցուածոց դեկտեմբերի ամսոյ ի քսան և հինգն ծնունդ առնեն,—գրում է Գաբելենացին,— զայն Յակովբայ առքելոյ և Դաւթայ մարգարէի յիշատակի ար եդ Կիրեղ, քանզի և սուրբ հարքն որ ի Նիկիա ժողովեալ, և երանելին սուրբն Գրիգորիոս, և սուրբ Արիստակէս ոչ կարգեցին երկուս տաւնս՝ զԾնունդն և զՀայտնութիւն, այլ մի տաւն: Եւ ըստ նոցունց հոգեկիր վարդապետքն և թարգմանիչք, որք յԱղեքսանդր և յայլ յայտնի քաղաքս վարժեալ, ոչ աւելիս և նորս ինչ թարգմանեցին, և ոչ ընկալան, և ոչ մեզ աւանդեցին. այլ հաստատեալ ենք ի վերայ հիման սուրբ առաքելոցն և երանելի հարքն, որ զօր և նոյն տաւն կատարեցին...»⁸:

Արդ, թե ովքեր են Աղեքսանդրիա և այլ հայտնի քաղաքներում կրթություն ստացած հայոց հոգեկիր վարդապետներն ու թարգմանիչները՝ հայտնի է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»: Սակայն Պատմահորն ու նրա ընկերակիցներին վերաբերող ակնարկումը այսքանով չի վերջանում: Գաբելենացի կաթողիկոսը ստուգախոս է նաև տոնի օրը հիշատակելիս: Խորենացու Պատմության երրորդ գրքի 62-րդ գլխում Աղեքսանդրիայի մասին խոսելիս ասվում է նաև, որ «Եւ ոչ ի քսան ի հինգ Տուրի՝ լորտուաց և արթրաց առնել բաշխումն, այլ ի մետասան նորին Տուրի՝ յայտնութեան տեառն կատարի տօն»⁹: «Տուրին» Աղեքսանդրյան տարվա 5-րդ ամիսն է, որի սկիզբը համապատասխանում է դեկտեմբերի 27-ին, ըստ Հուլյան տոմարի, հետևաբար այդ ամսի 11-ը կհամընկնի հունվարի 6-ին: Ուրեմն Ծննդյան և Հայտնության տոների նույն օրը նշելը Խորենացին գիտե հավաստիորեն և նրանից է քաղում Հովհ. Գաբելենացին:

Որ Գաբելենացու աղբյուրը հաստատապես Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան դրվագն է՝ կարելի է ապացուցել ոչ միայն բնագրային ընդհանրությամբ, այլև կաթողիկոսի մանրամասնող ցուցումով՝ Աղեքսանդրիայում և այլ հայտնի քաղաքներում ուսանած Հայոց հոգեկիր վարդապետներն ու թարգմանիչները այդպես են ընկալել, թարգմանել ու ավանդել: Ավելորդ է ասել, թե այդ հեռագնա ուսումնառությունը, մանա-

⁵ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 78—80, 81—84:

⁶ Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 122—126:

⁷ «Գիրք թղթոց», էջ 85—89: Ծառիս հեղինակային պատկանելության վերաբերյալ Ն. Ակինյանի և Ն. Տեր-Պողոսյանի տարակուսանքը միանգամայն անտեղի ու անփաստարկ է (տես նրանց նշվ. աշխ., էջ 159—163):

⁸ Նույն տեղում, էջ 88—89:

⁹ Սույն դրվագի այլ կտրվածքով ընդարձակ քննությամբ վերջերս հանդես եկավ բանասեր Հ. Սիմոնյանը, մատնացուցելով Խորենացու աղբյուրը՝ Աղեքսանդրի պատմությունը (տես «Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 2, էջ 90—92):

վանդ նրա հետ կապված հանգամանքները պատմությունը գիտե միայն Խորենացու¹⁰: Ի դեպ, «հոգեկիր վարդապետք և թարգմանիչք» բնութագրությունը ևս թելադրված է Խորենացու բնագրով՝ «յիմն ասեմ վարդապետե, որում ոչ անարժան գտայ աշակերտ, և ոչ անկատար վարժամբ ի յանգելեալ արուեստից՝ ինքնացայ» (III, ԿԲ):

Ուրեմն՝ Պատմահոր երկը 557—574 թվականներին կար և հայոց կաթողիկոսը կարդացել ու քաղում է կատարել նրանից:

2. Երևանի Մատենադարանում պահվող № 2679 թղթի հնագույն ձեռագիրը հայագիտությանը անհայտ միավոր չէ (առաջին մասը գրված է 981 թ., երկրորդ մասը՝ որոշ ժամանակ անց): Զեռագրի խմբագիր-կազմողին Ն. Ակինյանը առանձին հոդված է նվիրել՝ նախնական կոահումներով¹¹, սակայն այստեղ ներկայացված շատ նյութեր, մասնավորապես տարբեր ժամանակներում ու հեղինակների ձեռքով կազմված ժամանակագրություններ աղբյուրագիտական առումով ճանաչելի դարձան միայն վերջերս՝ Ա. Մաթևոսյանի հրապարակմամբ¹²: Պարզվում է, որ ձեռագրի 159ա—165ա էջերում գետեղված ժամանակագրությունը, որը վերջանում է հայոց ՆԶԱ (=1032) թվականով, ըստ երկրորդ հատվածի գրչի կամ խմբագրի տեղեկության, կազմված է Եվսեբիոս Կեսարացու և Աթանասի ժամանակագրությունների հիմամբ («Լաւ համարեցա[ւ] զՀոռովմոցն զ[Եւ]սեբեայ եւ զԱթանասի ժամանակագրութիւնս շարադրել»)՝ շարունակելով ու լրացնելով այն¹³: «Ժամանակագրության» Հայոց Ա (1) թվականի դիմաց եղած «դարձեալ սկիզբն արարի նոր թուականիս» տեղեկության առաջին դեմքով լինելը և գրչի վերոբերյալ «զԱթանասի ժամանակագրութիւնս» ցուցումը հիմք են տվել եզրակացնելու, որ խոսքը Հայոց տումարը կարգավորող Աթանաս Տարոնացու մասին է, որի գլխավորությամբ կայացավ 584 թ. Դվինի հավաքը¹⁴: Պարզվում է՝ «Աթանաս Տարոնացին իր ժամանակագրությունը կառուցել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» փաստական հարուստ նյութի վրա», նրանից քաղելով 74 պատմական վկայություն, որոնցից «55-ը վերաբերում են հայ իրականությանը, 7-ը՝ պարսկական թագավորներին, 12-ը՝ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից» հետո... եկած հռոմեական կայսրերին»¹⁵: Որ ժամանակագրության հեղինակը Խորենացու պատմությունից բացի տեղյակ է և այսօր մեզ անհայտ այլ աղբյուրի՝ պարզորոշ նրկում է Պատմահորը «Մովսես Խորենացի փիլիսոփա և մատենագիր» հի-

¹⁰ Հետևողականորեն տեղաշարժելով Խորենացուն, Ն. Ակինյանը «Հայոց պատմության» III գրքի 61, 62 և 68 գլուխները, ուր ուսումնառության մասին է պատմվում, հայտարարում է եկամուտ (տես նրա՝ Մատենագրական հետազոտություններ, հ. Գ, էջ 179, հմմտ. «Հանդես ամսօրեայ» 1956, էջ 130):

¹¹ Ն. Ակինյան, Դաիթ քահանայի խմբագիր ժամանակագրությունը, «Հանդես ամսօրեայ», 1957, էջ 181—185:

¹² Ա. Ս. Մաթևոսյան, Մովսես Խորենացին և Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 1, էջ 220—234: Հեղինակը անձանոթ է Ն. Ակինյանի հոդվածին:

¹³ Բնագրի հրատարակությունը տես «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 1—32:

¹⁴ Վկայությունը տես Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 65, նաև՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 42, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 63:

¹⁵ Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 225:

շատակումից և նրա անվան դիմաց փրկչական ՆՀԴ (474) թվականի նշումից¹⁶: Ա. Մաթևոսյանը քաղել և մեկ առ մեկ բերել է Խորենացուց եկող այդ տեղիները, ուստի նոր ապացույցի անհրաժեշտություն չկա¹⁷:

3. Բագրատ հայր կամ Աթենացին հայ մատենագրությանը կատարելապես անծանոթ անձնավորություն է: Հայաստան հասցեագրված նրա թուղթը, գրված հունարեն, մեզ անհայտ աղբյուրից կամ հավաքածուից, անցյալ դարի կեսերին եղել է Ստ. վրդ. Եազընյանի ձեռքին, որը և գրաքար թարգմանությամբ հրատարակել է «Յառաջադիմութիւն ազգային» հոդվածում¹⁸: Բերենք այդ եզակի հետաքրքրություն ներկայացնող բնագիրը.

«Ո՛ր բարեկամ, հասեալ ի Գերեզմանսն ի բլուրն անբարտաւան, պատմեա որդոց քոց՝ որպէս միաբանութեամբ և արութեամբ սակաւաձեռն գնդին անկաւ կործանեցաւ Բէլ վիրագ և անկարգ հրոսակն ի սրտմտութենէ քաջացն Հայոց իբրև գփոշի անհետ եղև ընդ երեսս դաշտին մեծի: Հասեալ յամուրն Անի ի շիրիմքս Արշակունի թագաւորացն, ուստ նոցա մի կարծել, թէ բաղդ և յաջողութիւն ազգին տեղի տուեալ իցեն ընդ ոսկերս նոցա: Տես զաշտարակն բարձրաբերձ և մտաւ ած զնախնին մեր զԱրամ, զարին, յհայրենասէր և զանխոնջ նախարարն, որ զքոսմբ ածեալ զոխերիմս նիւքար և ի ծայր ամբարտակացդ հանեալ՝ յայպն և ի տեսիլ աշխարհի և երկնային զօրութեանցն նշաւակէր. տես և զլերինս Մարաց և Կովկասեան, և զեզերս Պոնդու և Միջերկրայ ծովոց, զորս իւր սահման գծէր քաջն...»:

Բազում առումներով (այդ թվում և հայոց մանկավարժական մտքի պատմության համար) կարևոր այս թղթի գրության ստույգ ժամանակը որոշելը հնարավոր չէ, որվոհետև նրանում չկան թվագրվող իրողությունների հիշատակումներ: Կարծում ենք, սակայն, որ իրավացի պիտի լինի Նորայր Բյուզանդացին, երբ այն վերագրում է «ի ժամանակի մարգալանացն Պարսից (այսինքն յամուն 514—608) ըստ Ղ. Ալիշանի կազմած ժամանակագրության»¹⁹: Մասնավորապես այդ է մատնացուցում արաբական արշավանքների, Բագրատունյաց հարստության հաստատման ժամանակաշրջանների ակնարկի իսպառ բացակայությունը:

Թղթի հեղինակը ոգեշնչված է Խորենացու Պատմությամբ և նրանից է քաղում ազգային պատմության թվարկվող բոլոր դրվագները՝ «վիրագ և անկարգ հրոսակ» Բելի կործանումը հայոց քաջերից (Խոր., I, ԺԱ), Արշակունի թագավորների շիրիմների տեղի «ամուրն Անին» (Խոր., III, Ժ, ԻԷ), «արի, հայրենասէր և անխոնջ» Արամի հաղթություն «ոխերիմ Նիւքարի» հանդեպ (Խոր., I, ԺԳ): Ընդ որում, Խորենացուց են գալիս նաև բնութագրական մանրամասները՝ Հայկի «սակաւաձեռն գնդից» լինելը (Խոր.՝ «թուով յոյժ նուագունս»), ճակատամարտի տեղանքը «ի Գերեզմանսն, ի բլուրն անբարտաւան» (Խոր.՝ «Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօրէն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս»), Բելի պարտությունը ի «դաշտին մեծի» (Խոր.՝ «ի միջոց ինչ դաշտաձև») և այլն: Թերևս ավելի ուշագրավ է թղթի երրորդ դրվագում «ոխերիմ Նիւքարին» «ի ծայր ամբարտակացդ հանեալ» արտահայտությունը: Խորենացու երկում ասված է՝ «և անդ ուրեմն

¹⁶ Տես «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 15:

¹⁷ Ա. Մաթևոսյանի պատճառաբանված եզրակացությամբ թվականը վերաբերում է «Հայոց պատմության» գրությանը:

¹⁸ «Բազմավեպ», 1944, էջ 202—203:

¹⁹ Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ. էջ 21:

ի ծայր աշտարակի պարսպիցն ցից վարեալ երկաթի ընդ ճակատն՝ յորմն վարսել (var վարել) հրամայէ» (I, ԺԳ): «Ամբարտակ» եզրի «աշտարակ» իմաստով գործածությունը հատկորոշ է, ինչպես կարելի է եզրակացնել ՆՀԲ վկայակոչություններից (Ա, 55) միայն Խորենացուն:

Այսպիսով, 6-րդ դարում Աթենքում ապրող կամ գտնվող Բագրատ հայր իր ձեռքին Խորենացու «Հայոց պատմություն» ունի, ոգեշնչված է նրանով և դրվագներ է քաղում նրանից: Միայն Անի ամրոցի մասին կարող ենք ասել, թե Արշակունիների հանգստարանի այնտեղ գտնվելը նա կարող էր իմանալ և «Բուզանդարան պատմությունից» (III, ԺԱ, IV, ԻԴ)²⁰:

4. Վրթանես Քերթողը հայոց եկեղեցու և մատենագրության պատմությանը քաջ ծանոթ դեմք է: Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսի մահից հետո (604 թ.) մինչև բրահամ Աղբաթանեցու ընտրությունը (607 թ.) նա կաթողիկոսական տեղապահ էր, ուրեմն և 6-րդ դարի ավարտի և 7-րդի սկզբի գործիչ: Նրա գրական ժառանգությունից շատ բան չի պահպանվել²¹, և հայագիտությունը ստիպված է գոհանալ «Յաղագս պատկերամարտից» ճանով, որ մի քանի անգամ հրատարակվել է²²:

Ս. Տեր-Ներսեսյանի քննությամբ ճշտված է երկիս գրության հավանական ժամանակը, որ է 603 թվականը: Պատկերամարտությունը մերժող նրա կովաններից մեկն էլ այն է, որ Քրիստոսի կենդանության օրոք իսկ Աբգար թագավորը ստացել ու հարգել է փրկչի պատկերը: «Կամ զի՞նչ արդեք ասիցես զպատկեր տեսուն,—գրում է նա,—զոր աստուածային հաւատարիմ թագաւորի Աբգարու նկարեալ յանդիման Քրիստոսի տեսութեամբ իսկ, **գոր և այժմ ասեն գոլ ի մեծ եկեղեցոյն Ուռհայոս**»²³: Գուցե կարելի կլիներ մտածել, թե Քերթողը պարզապես արձանագրում է իր ապրած տարիներին հայտնի իրողությունը, եթե այլ աղբյուրներից չիմանայինք, որ 6-րդ դարում Եդեսիայում տեղի ունեցած խռովության ժամանակ արևելյան եկեղեցու այնքան հարգած «հրաշագործ պատկերը» քարկոծվել էր²⁴: Հազիվ թե Քերթողը վարսներ առ միջադեպը պարսավելուց, եթե չգոհանար ձեռքի տակ եղած աղբյուրը բառացի վերակրկնելով: Եվ հիրավի, Խորենացու գրքում ասված է. «Զայս թուղթ եբեր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յԵդեսացոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի» (II, ԼԲ):

Ի դեպ՝ Քերթողի գործածած «ասեն գոլ» արտահայտությունն ինքնին սկզբնաղբյուր հղելու միջնադարյան ընդունված եղանակ է: Եվ այդ աղբյուրն է. ինչպես բերված հատվածից կարելի է վստահանալ, Խորենացու «Հայոց պատմությունը», ուր Աբգար թագավորին վերաբերող մի քանի այլ դրվագներ ևս կան (II, ԻԲ—ԼԳ):

5. Սերեոսի «Պատմութիւն ի Հերակլ» կամ նոր հրատարակությամբ՝ «Պատմութիւն Սերեոսի» սկզբնամասում գտնվող Ա և Բ դպրությունների (այսպես կոչված Անանունի) առնչությունը Խորենացուն վաղուց և բազ-

²⁰ Հմմտ. Ն. Բիւզանդացի, նույն տեղում:

²¹ ՆՀԲ-ի կազմողների ձեռքի տակ եղել է Քերթողի գրչին պատկանող «Համառօտ պատմութիւն ընտիր ոճով վասն շինութեան Հոփսիսմեանց ի Կոմիտաս կաթողիկոսէ» երկը (տես ՆՀԲ, Ա, 19), որ տակավին անծանոթ է հայագիտությանը:

²² Գիտական հրատարակությունը տես Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 9:

²³ Անդ:

²⁴ Ս. Տեր-Ներսեսյան, Աշվ. աշխ., էջ 16:

միցս ապացուցված իրողությունն է: Ստ. Մալխասյանցը հանգամանալի վերլուծությամբ եզրակացրել է, որ «Բ դպրության Պարթևների թագավորների ցանկի համար իբրև գլխավոր և տիրապետող աղբյուր է ծառայել Մ. Խորենացու պատմությունը, որի զանազան տեղերից (գիրք Բ, գլ. Բ, ԿԸ, ԿԹ, ՀԱ) հեղինակը խմբագրել է միայն ժամանակագրական նյութը, բաց թողնելով պատմական մյուս տեղեկությունները»²⁵: Այս դրույթի շուրջ որևէ առարկություն չի եղել²⁶, որովհետև հենց բնագրային խորագրում ասված է, թե «երկրորդեցից ի պատմագրաց Մովսիսի Խորենացույ և Ստեփանոսի Տարանագույ հաւաստի և ճշմարիտ մատենագրաց՝ գորդի ի հարէ ճանաչել»²⁷: Ստեփանոս Տարոնացուն Ասողիկի հետ չնույնացնելու կովանները Ստ. Մալխասյանցի կողմից այլևս թվարկված են, ուստի պատմության այդ հատվածը հետին դարեր տեղափոխելն անկարելի է: Չմտնելով հիշյալ Ա. և Բ դպրությունները «Պատմութիւն Սեբեոսի» բաղկացուցիչ մաս լինել-չլինելու ծեծված հարցի մեջ, նշենք, որ հավաստիորեն Սեբեոսի անունը կրող երկր ևս անձանթ չէ Խորենացու Պատմությունը: Տարիներ առաջ գիտական հրատարակությունը գրախոսելու առիթով մենք ուշադրության ենք առել Պատմահորից քաղյալ ինքնատիպ մի բնութագրություն: Թեոդորոս Ռշտունու և Ներսես կաթողիկոսի մասնակցությամբ կազմած և Կոստանդին կայսերն ուղարկված պատասխան թղթի ավարտամասում կարդում ենք. «Իսկ մեր որպէս ընկալաք զհրամանս երկնաքաղաքացի և բարեպաշտ քո թագաւորութեանդ, քաջ արանց արքայ Կոստանդին, լաւագոյն համարեցաք զսահմանադրութիւնն ուղղափառ հաւատոյն, զոր ընկալանն հարքն մեր...»²⁸: Ընդգծված «քաջ արանց արքայ» բանաձևումը բառացիորեն քաղված է Խորենացու Պատմության մեջ առկա Խոսրով թագավորի՝ «առ նախարարսն» թղթից (**«Քաջ արանց Խոսրով Հայոց արքայ. ստրատելատիդ Գաւազոնի և ամենայն նախարարացդ մերոց ողջոյն շատ»**, Խոր., III, ԽԸ)²⁹: Սեբեոսը մասնակից է Կոստանդինանոս (Կոստանդ Բ) կայսեր չորրորդ տարում, Ներսես Շինողի օրոք կայացած Դվինի ժողովին (645 թ.)³⁰ և իր Պատմությունն ավարտում է 661 թ. անցուդարձերի արձանագրումով, հետևաբար 7-րդ դարի կեսերին Խորենացու Հայոց պատմությունը շրջանառում էր Հայաստանում, ընդ որում նրանից ոչ միայն դեպքեր ու ժամանակագրություններ էին քաղում, այլ նաև բանաձևային կիրառություն ստացող բնութագրումներ³¹:

6. Թադեոս առաքյալի և նրա աշակերտ Ադդեի քարոզչության մասին պատմող աղբյուրները շատ են և տարժամանակյա: Խորենացին երկու անգամ հիշեցնում է, որ նրանց մասին «յառաջագոյն գրեալ [է] յայլոյ», «գտագանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ»: Վ. Հացունին մասնավորեցրել է, որ Խորենացու հղումը վերաբերում է «Վկայաբանութիւն Թադեոսի առա-

²⁵ Ստ. Մալխասեանց, Սեբեոսի Պատմութիւնը և Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 39, հմմտ. էջ 43—44:

²⁶ Կարծիքների բնությունը տես Ստ. Մալխասյանցի նշված աշխատության ներածական մասում:

²⁷ «Պատմութիւն Սեբեոսի», Երևան, 1979, էջ 55:

²⁸ Անդ., էջ 161:

²⁹ Հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 276:

³⁰ Տես «Կանոնագիրք Հայոց», Բ, Երևան, 1971, էջ 200 և 214:

³¹ Ի դեպ՝ որ մեր բերած արտահայտության հեղինակը իրոք Խորենացին է և ոչ նրա աղբյուրը կամ մեկ այլ բնագիր, կարելի է ապացուցել Նիկեական որոշումներն ուղեկցող թղթի այլ ընդօրինակություններով (տես «Կանոնագիրք Հայոց», Ա, Երևան, 1964, էջ 566):

քելոյն» երկին և Փալատոսի մոտ եղած հիշատակումներին³²: Հայագետների մի խումբ կասկածում է այդ հիշատակումների նախնականության հանդեպ³³, սակայն ներկա դեպքում մեզ զբաղեցնողը այլ հարց է, հատկապես այն, որ Խորենացու Պատմության երրորդ գրքի 34-րդ գլուխը՝ «Յաղագս վկայութեան առաքելոցն մերոյ», անկախ հեղինակի ապրած ժամանակին վերաբերող իրարամերժ կարծիքների, բնագրային չլինելու կասկած չի հարուցում:

Ինչպես նշվեց, Խորենացուց առաջ նրանց մասին պատմող երկեր իրոք կան: Պատմահոր ապրած ժամանակը տեղաշարժող հետևողական հայագետներից ամենահետևողական Ն. Ակիմյանը Թադեոսի և Սանդուխտի «վկայաբանության» քննության առիթով գրում է. «Անանուն ժամանակագրութիւն Մ. Խորենացիէն առնելով կը գրէ. իսկ ըստ հրամանի Փրկչին մերոյ Թադէոս, որ էր մի յեթանասանիցդ, եկն յՈւոհա առ Արգար թագաւոր և բժշկեաց զնա ամենայն տամբ իւրով և շինեալ անդ եկեղեցի՝ ձեռնադրեաց քահանայ զԱդէ, որ էր կերպասագործ թագաւորին: Եւ եկեալ զնաց անտի ի Հայս՝ քարոզել զբանն կենաց: Իբրև զգաց զգալուստ նորա Սանատրուկ արքայ Հայոց, զնաց ընդ առաջ նորա և սպան զնա յԱրտագ գաւառի, ի գեաղն Բագրոտ»³⁴: Քաղումը, հիրավի, կատարված է Խորենացու Պատմությունից, բացառությամբ **Բագրոտ** գյուղանվան: «Անանուն ժամանակագրութիւն» անվան տակ Ն. Ակիմյանը նկատի ունի Մատենադարանի 981 թ. թղթե ձեռագրի (№ 2679) 28v—70v էջերի բովանդակությունը, որ երկիցս հրատարակված է³⁵: Անկախ Անանուն, Անանիա Ծիրակացի թե մեկ այլ հեղինակի պատկանելու հանգամանքից (Ն. Ակիմյանը այն համարում է «Դաւիթ քահանայի խմբագիր ժամանակագրություն»)³⁶, խորագրում իսկ աաված է՝ «Մովսէսի Խորենացույ և Անդրեասի», որ ինքնին աղբյուրի հղում է նշանակում³⁷: Արդ, արժարժվող «Ժամանակագրությունն» ավարտվում է կայսր Հուստիանոսի երկու տարվա գահակալության և Հայոց ՃԼԴ (134=685 թ.) թվականին կատարված դեպքերի հիշատակությամբ: Եթե այն կազմվեր այս թվականից ավելի ուշ, ապա հեղինակը կիմանար կայսեր գահակալության հաջորդ տարիները ևս և կշարունակեր եղելությունների թվարկումը: Ուստի իրավացի են հայագետները, երբ այն ճանաչում են իրապես որպես 7-րդ դարի հուշարձան, որով ունենք Խորենացու բնագրից քաղումներ կատարող այդ դարում ապրած մեկ հեղինակ ևս³⁸:

³² Վ. Հացունի, Հայաստանեայց եկեղեցին Լուսաւորչէն յառաջ», «Բազմավէպ», 1925, էջ 225, 257, 289:

³³ Կարծիքների քննությունը տես Ն. Ակիմյան, Մատենագրական հետազոտութիւններ. Վկայաբանութիւնս ա. Թադէի և Սանդխտոյ կուսին և կանոնք Թադէի, «Հանդէս ամսօրեայ», 1969, էջ 403—426:

³⁴ Ն. Ակիմյան, նշվ. աշխ., էջ 221—222:

³⁵ Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վենետիկ, 1904: Նաև՝ Ա. Աբրահամյան, Անանիա Ծիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 357—399:

³⁶ Տես «Հանդէս ամսօրեայ», 1957, էջ 181—185:

³⁷ Մյուս աղբյուրներն են, ըստ Ն. Ակիմյանի, Եվսեբիոսի Քրոնիկոնը և եկեղեցական պատմությունը, Եպիփան, Կայսերաց գիրք, Վրթանես Քերթող, Անդրեաս (վերջինիս նույնացնում է «Հիպոդիտոսի» կամ «Ազգաց գրքի» — (հետ): Liber generationis (hominum) Տես նշվ. աշխ. էջ 184:

³⁸ Մովսէս Կաղանկատվացու անունով հրատարակված «Աղվանից պատմությանը» չենք անդրադառնում, թեև նրանում կան Խորենացուց քաղված ոչ քիչ տեղիներ (I, 3—6, 12, 13, 15, II, 3), որովհետև վաղուց արդեն ապացուցված է, որ այն վերջնական ձևա-

7. Խորենացու Պատմությանն առնչվող հաջորդ երկը «Նկարագիր կարգաց ի բանից Եզնկան երիցու» խորագիրը կրող կարճատև բնագիրն է՝ բաղկացած երեք դրվագից («Յաջորդութիւն թագաւորացն ի Տրդատայ», «Նորոգումն վկայարանին և Հռիփսիմէի ի Կոմիտասէ», «Ժամանակք հայրապետացն Հայոց»)³⁹: Եթե հետևելու լինենք խորագրի և երկրորդ մասի ավարտի հիշատակության տվյալներին⁴⁰, հեղինակը 618/619 թվականից հետո ապրած ժամանակագիր է, իսկ եթե նրա ժամանակը սահմանենք ըստ հայրապետների թվարկման, ապա նրան պիտի համարենք Ստեփանոս կաթողիկոսի (788—790 թթ.) ժամանակակիցը: Համենայն դեպս՝ այս Եզնիկ (Եզնակին Կողբացու հետ նույնացնելու և բնագրի մեծ մասը անագանագույն—հետսմուտ հայտարարելու Ն. Ակինյանի դրույթները համոզիչ չեն: Այդ կարելի է փաստել «Նկարագիր կարգացի» առաջին իսկ դրվագի վերջում Սահակի և Մեսրոպի աշակերտ Եզնիկի հիշատակման փաստով, որից ազատվելու համար երախտաշատ հայագետը ընդմիջարկություն է համարում ողջ պարբերությունը: Այս հուշարձանի տարբեր հատվածներում կան Խորենացու Պատմությանն աղերսվող տեղիներ: Ն. Ակինյանը հավատացած է, որ քաղագրողը Պատմահայրն է, մինչդեռ նրա իսկ մատնացուցած իրողությունները հակառակն են ապացուցում.

ա) Մաշտոցի աշակերտներից «Նկարագիր կարգացը» գիտե՝ Ղևոնդ, Արձան, Կորյուն, Եզնիկ, որ անշուշտ Խորենացուց է գալիս (III, 4), ընդ որում՝ այդ իսկ պատճառով էլ ինքը՝ Խորենացին չի հիշված (այդ դրվագում նա իրեն չի հիշատակում):

բ) Խորենացիին գիտե Սահակի Եփեսոսի տարբերակը (III, ԼԹ, ԽԱ), իսկ «Ժամանակ հայրապետաց Հայոցը» նրանց տարբեր անձիք է համարում:

գ) Տրդատի որդի Խոսրովին միայն Խորենացին է «ոչ համեմատ հա-
սակի ծնողաց իւրոց» (II, 29) և «փոքր էր յանձնէ և անօտր ոսկերօք»
որակում, որտեղից և նա կարող էր «փոքր» հորջորջվել, ինչպես ունենք
«Նկարագիր կարգացի» առաջին իսկ պարբերությունում: «Կոմէս» տերմի-
նը ևս Խորենացուց է գալիս (III, 102) ընդ որում՝ գրեթե ողջ կապակցու-
թյամբ՝ «...և աշխարհին իրեանց մասինն կացուցին Յոյնք կոմէսս իշխանս»
(Մ. Խոր.), «Յետ սորա կոմէսք կալան» («Նկարագիր կարգաց»):

8. Խորենացու Հայոց պատմության բնագիրը ճանաչող և նրանից բա-
նացի քաղումներ կատարող հուշարձանների մի առանձին խումբ են ներ-
կայացնում վաղ-միջնադարյան վարքերն ու վկայաբանությունները: Ափսո-
սանքով պիտի արձանագրել, որ Պատմահոր ապրած ժամանակի շուրջ վե-
ներ ծավալելիս այդ երկերը բնագրագիտական քննության չեն ենթարկվել,
իսկ հաճախ էլ, իբրև Խորենացու աղբյուր ընկալելով՝ տեղաշարժել են նրան:
Հակառակ պարագայում, Խորենացուց քաղված լինելը ընդունելիս, տեղա-

վորում է ստացել 10-րդ դարում Մովսես Դաւիթորանցու ձեռքով: Խորենացուն վերաբերող տեղիքների մասին տես Հ. Ներսէս Ակիմեան, Մովսես Դաւիթորանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 58—59: Հմմտ. Ա. Ա. Акопян, Албания—Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 201—202.

³⁹ Բնական հրատարակությունը տես Հ. Ն. Մկրտչյան, «Երկրաբանական հրատարակություններ», 1937, էջ 517—532:
Եզնկյան Երիցու», «Հանդես ամսօրեայ», 1937, էջ 517—532:
Եզնկյան Երիցու (ձեռագրում՝ Եզնկյանի) Ի թարգմանել զգիրս այս»:

⁴⁰ «Եղիցի յիշատակ Եզնկան (անհայտ)»

շարժման են ենթարկվել իրենք՝ այդ հուշարձանները: Երկու դեպքում էլ մասնագիտական քննությունը կատարվել է իբրև նախնական կոահում կամ խորենազգիտության մարզում շրջանառող պատրաստի դրույթների կիրառում: Նախ թվարկենք այդ հուշարձանները.

ա) «Վկայութիւն սրբոյն Ծուշանկայ, որ ի Վիրս կատարեցաւ յառնէ իւրմէ յանթիպատրեայ Վրաց առաջնորդէ», կարճ՝ «Ծուշանկի վկայաբանության» համառոտ խմբագրություն⁴¹: Կազմված է հայերեն ընդարձակ խմբագրության այսօր մեզ անհայտ տարբերակի համառոտումով: «Բդեշխ» տերմինի փոխարեն «անթիպատրոս» ունենալը հուշում է, թե խմբագրումը տեղի է ունեցել 6-րդ դարի վերջերից ոչ վաղ⁴²: Առաջին իսկ հրատարակության իրացնողը նկատել է, որ վկայության ներածական մասը «ստեալ է ի բանից Խորենացոյն ի ԾԱ և ի ԽԹ գլխոց Գ գրոց Պատմութեան Հայոց»⁴³: Եւ հիրավի, քաղումը բառացի է, աննշան միջարկումներով կամ տարրերթերցումներով, ընդ որում՝ ի մի են բերված «Հայոց պատմության» տարբեր գլուխներում եղած և Սահակին վերաբերող տեղեկություններն ու բնութագրումները (III, ԾԱ+III, ԽԹ+III, ԾԱ)⁴⁴:

բ) «Վկայաբանութիւն սրբոյն Ոսկեայ և ընկերաց նորա» և «Վկայաբանութիւն սրբոց քաւշիցն, որք վկայեցան ի Բագրևանդ գաւառի ի Սուկաւէտ լեառն»⁴⁵: Այս երկու հուշարձանի ընդհանրությունը պայմանավորված է Ալանների երկրից Սաթենիկի հետ կամ նրա հետևողությամբ Հայաստան եկած քրիստոնեադավանների նահատակության սյուժեով: Վկայաբանությունների հեղինակը, ըստ բնագրերում իսկ պահպանված հիշատակարանային տեղեկության, ոմն Անտոն անապատական է «Ի Հոովմայ»: Ղ. Ալիշանի կարծիքով այդ «Անտոն Հոովմայեցին» ինքը Մովսես Խորենացին է⁴⁶: Ծշտված է, սակայն, որ նման նույնացման հիմքերը չկան, որովհետև հեղինակը հականե-հանվանե հիշատակված է⁴⁷: Սակայն աներկբա է սույն վկայաբանությունների աղերսը Խորենացու Պատմությանը: Ն. Մառի կարծիքով, Սաթենիկի հիշատակությունը Խորենացու երկում հնարովի չէ, քանի որ մինչև 7-րդ դարի կեսերը գրված Վկայաբանությունները ևս գիտեն նրան⁴⁸: Կ. Կեկելիձեն արդարացիորեն նկատել է, թե Ոսկյանց ու Սուքիասյանց ալանական ծագումը **Ալանք** և **Աղուանք** եզրերի գփոթի արդյունք է,

⁴¹ Հրատ.՝ «Սուփերք հայկականք», Թ, Վենետիկ, 1853, էջ 49—55, նաև՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Հին հայերենի քրեստոմատիա, Տփ., 1920, էջ 100—103 (վրաց.): Հակոբ Ցուրտավեցի, Վկայաբանություն Ծուշանկի, հրատ. Ի. Աբուլաձեի, Տփ., 1938, էջ 49—53 (վրաց.): Վերահրատարակությունը՝ 1978, Տփղիս, էջ 122—126:

⁴² Հմմտ. «Հանդես ամսօրեայ», 1907, էջ 123, նաև՝ Իլիա Աբուլաձե, նշվ. աշխ., էջ 038 (48):

⁴³ Ղ. Ալիշան, «Սուփերք Հայկականք», Թ, էջ 60, ծան. 12: Նույնը հետագայում ասել են Ն. Մառը, Ի. Զավախիշվիլին, Ն. Ակինյանը, Ի. Աբուլաձեն:

⁴⁴ Տես Ի. Աբուլաձեի հրատ., էջ 49 (122)₉—50 (123)₃₂:

⁴⁵ Բնագրերի գիտական հրատ. տես Ի. Աբուլաձե, IX—X դարերի վրաց-հայկական գրական առնչություններ, Թիֆլիս, 1944, էջ 9—21, 22—61 (վրաց.):

⁴⁶ Ղ. Ալիշան, Արշալոյս քրիստոնեության Հայոց, Վենետիկ, 1901, էջ 66:

⁴⁷ Անտոն Հոովմայեցու հիշատակարանային ներածությունը և մանավանդ Սուքիասյանց վկայաբանության վերջաբանը (պահպանվել է վրացերեն թարգմանությամբ) նշանակալի չափով հիշեցնում են Խորենացուն վերագրվող «Հոփսիմեանց պատմութեան» ներածական մասը:

⁴⁸ Н. Марр, Из поездки на Афон, СПб., 1899, стр. 17—18.

որը հատուկ է նաև հունական աղբյուրներին և որ վկայաբանություններում առկա այդ շփոթը գալիս է Մովսես Խորենացու Պատմությունից (I, Լ, II խթ, Ծ, ԾԲ)⁴⁹: Ուրեմն պիտի եզրակացնել, որ գիտնականը այս երկու հուշարձանի աղբյուր է համարում Խորենացուն: Եվ իրոք, վկայաբանությունների հեղինակը քանիցս նշում է, թե ինքը տեղեկությունները քաղում է «ի գրոց պատմագրաց», իսկ մեկ դեպքում ուղղակի ասում. «իսկ ինչպես տեղեկացա ճշմարիտ պատմողներից ու հոգևոր գրքերից, որոնք հաղորդում են **Հայքի պատմություններն ու կարգավորությունները**, այս երանելիները պարսից խմբից ու տոհմից էին, օսերի թագավորներից հարգված ու անվանի...»⁵⁰: Փաստորեն այստեղ ունենք աղբյուրի անմիջական հիշատակություն՝ Հայոց մի այնպիսի պատմության, որ ալաններին, մասնավորապես Սաթենիկին վերաբերող տեղեկություններ կան, որպիսին է միայն Խորենացու Պատմությունը: Ուրեմն՝ 7-րդ դարի առաջին տասնամյակներից ոչ ուշ գրված վարքագրական երկու հուշարձան ևս իբրև աղբյուր են գործածում Խորենացու երկը:

գ) «Վկայութիւն սուրբ հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիէլի»⁵¹: Նախորդների հետ նույն շարքին պատկանող հուշարձան է, բայց եթե այլ դեպքերում անհրաժեշտ էր լինում ապացուցել Խորենացու Պատմությանն ունեցած առնչությունը, այստեղ արդեն դրա կարիքը չկա: Վկայաբանության տարբեր հատվածներում առկա են Պատմահոր երկից մեծ մասամբ բառացի քաղված մի շարք հատվածներ (Մ. Խոր., II, ՂԱ, III, Գ, III, Բ, ԺԱ, ԺԳ, ԺԴ), ընդ որում առանձին դեպքերում կարելի է այդ հատվածների հիմամբ սրբագրություններ առաջարկել Խորենացու բնագրին⁵²: Ն. Մառը հակված էր այս վկայաբանության մեջ ևս Խորենացու աղբյուր տեսնել, բայց և միաժամանակ չէր բացառում Պատմահոր երկից քաղած լինելու հավանականությունը, ուստի եզրակացնում էր. «այս պարագային հույժ էական կովան կունենայինք հօգուտ այն բանի, որ Մովսես Խորենացին 7-րդ դարի կեսից ոչ ուշ ապրած պատմիչ է»⁵³: Ի. Աբովաձեն Խորենացուց քաղած լինելը չի մերժում, բայց որովհետև հայերենից կատարված հին վրացերեն թարգմանության սկզբնամասում Ագաթանգեղոսի մեզ հասած բնագրից հատված կա, իսկ Ագաթանգեղոսի երկը Ն. Մառի, Ն. Ադոնցի և Իվ. Ջավախիշվիլու հետևողությամբ 8-րդ դարի խմբագրություն է համարում, Վկայաբանության ստեղծման ժամանակը համարում է այդ դարից ոչ առաջ⁵⁴: Այժմ, Գ. Լաֆոնտյենի հրատարակությու-

⁴⁹ Կորնելի Կեկելիձե, Դրվագներ վրաց հին գրականության պատմությունից, հատ. X, Թիֆլ., 1968, էջ 126 (վրաց.):

⁵⁰ Տես Ի. Աբովաձե, նշվ. աշխ., էջ 22: Ներածական սույն դրվագի հայերեն բնագիրը դեռ երևան չի հանված:

⁵¹ Բնագրի հրատ. տես «Սոփերք հայկականք», Ժ, էջ 47—56: Գիտական հրատ.՝ Ի. Աբովաձե, նշվ. աշխ., էջ 62—68:

⁵² Այսպես, օրինակ, Խորենացու բնագրում կարդում ենք. «Թէպէտ և յանլիութիւն ատուրցն հայելով՝ պարականոն՝ զիրն վարկանէր, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն...» (III, Գ): Հունարան «պարականոնի» փոխարեն վկայաբանության մեջ ունենք «թէպէտ և յանլիութիւն ատուրցն հայելով պատանույն, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն...»

⁵³ H. Mapp, նշվ. աշխ., էջ 18:

⁵⁴ Ի. Աբովաձե, նշվ. աշխ., էջ 0140: Ագաթանգեղոսի հատվածի հայերեն թարգմանությունը տես Պ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 122—123:

նից հետո, գիտենք, որ այդ թվագրությունը թյուր է, 7-րդ դարի սկզբին Ագաթանգեղոսի ընդարձակ (այսպես կոչված ազգային) խմբագրությունը արդեն հայերենից հունարենի էր թարգմանվել⁵⁵: Ուրեմն պարզ է՝ եթե ոչ ավելի վաղ, գեր 7-րդ դարում, ինչպես Ն. Մառն էր թվագրում, վկայաբանությունը լայնորեն քաղումներ է կատարում Խորենացուց:

դ) «Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայրապետին և Խաղայ եպիսկոպոսին»: Բնագիրը Երուսաղեմի ձեռագրերից մեկում երևան է բերել Ն. Մառն⁵⁶, իսկ գիտական հրատարակությունը իրացրել է Ի. Աբովաձե՛ն⁵⁷: Երկուսն էլ ըստ ամենայնի դիտարկել են, որ բացառությամբ Փավստոսից եկող մի դրվագի, բնագիրն ամբողջությամբ քաղված ու հարսաված է Խորենացու Պատմության երրորդ գրքի տարբեր գլուխներից (մասնավորապես՝ III, Ի, ԻԹ, Լ, ԼԱ, ԼԲ, ԼԳ, ԼԵ, ԼԶ, ԼԷ, ԼԸ): Նախորդի պես այս հուշարձանը ևս սրբագրությունների հնարավորություն է ընձեռում: Այսպես, օրինակ՝

Խորենացի

«Պատմութիւն Ներսիսի»

Եւ գերկուս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ. մի՛ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոյ սեպհական ազատութեանն առնէին. և միւս՝ որ ի վերայ մեռելոց գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն (III, Ի):

Եւ գերկուս զայսոսիկ բառնայ ի նախարարացն ազգաց. մի՛ զմերձաւորաց խնամութիւն զոր վասն ազահելոյ սեպհական ազատութեանն առնէին. և միւս՝ որ ի վերայ մեռելոց գործէին ոճիրս, **կոծելով** ըստ հեթանոսական սովորութեանն:

Պարզ է, որ նախնականն ու բնագրայինը «Ներսիսի պատմության» ընթերցումն է: Ինչպես մյուս դեպքերում, այս հուշարձանն էլ Ն. Մառն թվագրում էր 7-րդ դարից ոչ ուշ ժամանակով:

ե) «Կատարումն սրբոյն Սահակայ Պարթևի»: Սույն խորագրի տակ առանձնացվող երկը փաստորեն Ղազար Փարպեցու Պատմության առաջին դրվագի 18-րդ հատվածն է⁵⁸: Ներկա դեպքում հեղինակային ստուգության հարցը մեզ չի զբաղեցնում⁵⁹, այլ այն, որ հիշյալ վերտառությամբ երկը մեզանում գործառնել է իբրև առանձին միավոր և պահպանվել հին վրացերեն թարգմանությամբ: Քանի որ այդ թարգմանության մեջ նկատելի է 700-ա-

⁵⁵ Guy Lafontaine, La version greque ancienne du Livre Arménien d'Agathange, Louvain-la-Neuve, 1973, p. 33—41:

⁵⁶ Н. Марр, Предварительный отчет о работе на Синае, веденных в сотрудничестве с И. А. Джаваховым, и в Иерусалиме, в поездку 1902 г., стр. 15.

⁵⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 69—79:

⁵⁸ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 37—38: Պատմության Սահակին վերաբերող հատվածը հայտնի է նաև առանձին ընթերցանություններով (տե՛ս Նորայր եպս. Պողարյան, Նորագյուտ հատված Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան», «Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 263—274, նաև՝ Պարույր Մուրադյան, Հատված Ղազար Փարպեցու «Պատմությունից», «Հայագիտական հետազոտություններ», Ա, Երևան, 1974, էջ 194—226:

⁵⁹ Խնդրի բնությունը տե՛ս Հ. Ն. Ակիբյան, Պատմական աղբիւրները 380—450 շրջանի համար, «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 454—460: Հմմտ. նաև «Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 403—414:

կան թվականներին գրված Narratio...-ի բնագրային ազդեցությունը⁶⁰ և վրացերեն բնագրի առաջին իսկ տողում ասված է, թե Սահակը «ըստ հարց նախնի կարգի ամուսնացած էր», իսկ եպիսկոպոսների ամուսնացածությունն արգելվեց վեցերորդ տիեզերական ժողովի որոշմամբ 692 թվականից⁶¹, ուրեմն համապատասխան հայերեն բնագիրը գոյացել կամ թարգմանվել է 7-րդ դարի ավարտից ոչ շուտ: Մենք այստեղ չենք քննարկելու նաև Փարպեցուց քաղված հատվածների առնչությունը Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան դրվագներին որոնցով ի մասնավորի զբաղվել են Խալաթյանը, Ն. Բյուզանդացին, Ն. Ակինյանն ու Պ. Տեր-Պողոսյանը⁶², այլ անհրաժեշտ ենք նկատում արձանագրել, թե հայերենից հին վրացերեն թարգմանված «Կատարումն սրբոյն Սահակայ Պարթևի» բնագրում կան ուղղակիորեն Խորենացուց վերցրած հատվածներ, որոնք ճանաչել և առանձնացրել է այդ երկի ուսումնասիրությամբ զբաղված հայագետ Ի. Աբուլաձեն⁶³: Իրողությունը փաստելու համար ասենք միայն, որ քաղագրողը անհրաժեշտ է համարել կրկնել Խորենացու այն վերապահությունը, թե «Բայց թե ասիցէ ոք՝ պարտ է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն գրել՝ գիտացէ, զի ոչ յումեքէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակն ճշմարտութեամբ, և ոչ մեք ի պատմութեանս հիսել հաւանիմք» (III, ԿԵ): Այս խոսքերի դիմաց հին վրացերենում կարդում ենք. «...անվախ էր խոսում, սակայն չհասցրինք գիտենալ նրա խոսքերի խորքը»: Կարծում ենք նոր ապացույցներ վկայակոչելու հարկ չկա:

Այսպիսով, վերևում մենք անուն առ անուն թվարկեցինք տարբեր ժանրերի պատկանող վեց հուշարձան ևս, որոնք աղերսվում են Խորենացու Պատմությանը կամ քաղումներ կատարում նրա բնագրից: Այդ հուշարձանների առանձնացումը պատահական չէր. նրանք բոլորը միջնադարում հայերենից թարգմանվել են վրացերեն և պահպանվել Աթոռի Վրաց մայրավանքի «Վարք սրբոցում»⁶⁴: Զեռագիրը ընդօրինակված է 10-րդ դարի վերջերին, «նուսխուրի» գրչությամբ, Ն. Մառի ճշտմամբ՝ «մրգլովանի» (երկաթագիր) գաղափար օրինակից: Ի. Աբուլաձեն թարգմանությունները զետեղելի է համարում 840—960-ական թվականների արանքում, սակայն Կ. Կեկելիձեն ցույց է տվել, որ նման եզրակացության հիմնավոր կովաններ չկան⁶⁵: Ն. Մառը հակված էր թարգմանությունները թվագրել հայ-վրացական եկեղեցական միասնության շրջանով, ուստի մատնացուցում էր 7-րդ դարը: Այս եզրակացությունը անհամեմատ ավելի հիմնավոր է, որովհետև դարը: Այս եզրակացությունը անհամեմատ ավելի հիմնավոր է, որովհետև դարը: Այս եզրակացությունը անհամեմատ ավելի հիմնավոր է, որովհետև դարը: Այս եզրակացությունը անհամեմատ ավելի հիմնավոր է, որովհետև դարը:

⁶⁰ Հունարեն բնագրի հրատ. տեւ Gerard Garitte, La Narratio de rebus Armeniae, Louvain, 1952, Հ. Բարթիկյանի հայերեն թարգմանությունը տեւ «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 457—470:

⁶¹ Հմմտ. Կ. Կեկելիձե, Աշվ. աշխ., էջ 129:

⁶² «Հանդես ամսօրեայ», 1972, էջ 403—414:

⁶³ Ի. Աբուլաձե, Աշվ. աշխ., էջ 0143—0149, Բնագրի հրատ. տեւ Աշվ. աշխ., էջ 80—84:

⁶⁴ Զեռագրի նկարագրությունը տեւ R. Blake, Catalogue des manuscrits géorgiens de la bibliothèque de la Laure diviron au Mont Athos, «Revue de l'Orient chrétien», 1931, No. 28, pp. 318—329. Հմմտ. Պ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խղմբագրությունները, էջ 112—120:

⁶⁵ Կ. Կեկելիձե, Աշվ. աշխ., էջ 127—128:

թյանն առնչելու Ի. Աբուլաձեի վարկածը չի հաստատվում: Կարծում ենք, այդ է հաստատում նաև գրչագրի նախօրինակի «երկաթագիր» լինելու հանգամանքը: Մի բան պարզ է՝ այս հուշարձանների հայերեն բնագրերը գոյացել ու շրջանառել են ավելի վաղ, քան կատարվել է նրանց հին վրացերեն թարգմանությունը: Եվ քանի որ նրանք բոլորը բնագրական առնչություններ ունեն Խորենացու Պատմության հետ՝ Պատմահոր երկը այդ դարում արդեն կար:

Մեր եզրակացությունն արդեն պարզ է. կամ պիտի ապացուցել այս շուրջ երկու տասնյակ հուշարձանների, հիշված հեղինակների ու թարգմանությունների անվավերականությունը, կամ ընդունել, որ Խորենացին այն դարի ու միջավայրի հեղինակ է, որոնցով ինքը ներկայանում է: Կարծում ենք, գիտության, մանավանդ բնագրագիտության նորմերով ու մեթոդներով առաջնորդվող հետազոտողի համար այլևս տարակուսելու հնարավորություն և առիթ չպիտի լինի: Բայց այդ ամենն չի նշանակում, թե պիտի բանադրել Խորենացու քննադատությամբ պարապողներին. նրանց բերած նպաստը ևս քիչ չէ՝ եթե ուզում ենք մեր պատմությունը հիմնել աղբյուրագիտական վստահելի խարիսխների վրա: Խորենացու «Հայոց պատմությունը» կարոտ է քննական հրատարակության, որով կզատորոշվեն ընդմիջարկություններն ու հետագա հավելումները, աղավաղումները կպարզվեն, և մենք ի նորո կսկսենք հասկանալ ու ճանաչել Պատմահորը: Մեր քննության առած հուշարձանները նշանակալի նյութ են ընձեռում այդ սպասելի գիտական հրատարակությունն իրացնելուն:

Եվ այնուամենայնիվ, մեր խոսքը ավարտուն չէր լինի, եթե չարձանագրեինք, որ հայոց մատենագրության ավանդած «երանելի փիլիսոփա», «մատենագիր», «նարտասան», «քերթող, քերթողահայր», «Պատմահայր» և այլ որակումները պարզ հաճոյախոսություններ չեն, այլ նրա իրական վաստակը ներկայացնող եզրեր: Դժվար է ցույց տալ մեկ այլ մատենագիր, որի ստեղծած երկը հաջորդ երկու հարյուր տարիների ընթացքում այդքան հաճախ և այդքան բառացի շրջանառություն կատարեր, արգասավորելով ճաների, վարքերի, վկայաբանությունների, ժամանակագրությունների ու թղթերի պատկառելի մի քանակություն, որպիսիք են արդեն ներկայացված հուշարձանները: Փաստորեն Խորենացու տեղաշարժը խառնաշփոթի կմատնի տակավ առ տակավ, օղակ առ օղակ հյուսված մատենագրության շղթան: Եթե Խորենացին պայմանավորում է իրենից օգտվող հեղինակների ու հուշարձանների երևան գալը 6—7-րդ դարերում, ապա վերջիններս էլ պայմանավորում են Խորենացու կենաց ու գործի ժամանակը, նշանակությունը:

